Կազմված է 10.10.2024թ. և բաղկացած է 9 թերթից)

Տպագրված է ընդամենը 2 օրինակ

ՕՐԻՆԱԿ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՖԻԶՄԱԹ ԴՊՐՈՑԻ ԲԱՐԵԿԱՄ»

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

հոգաբարձուների խորհրդի

10.10.2024թ. կայացած նիստի որոշմամբ

(արձանագրություն թիվ 5)

Հիմնադրամի տնօրեն՝

Ս. Գրիգորյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ

ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 14.11.2019թ.

գրանցման համար՝ 222.160.1101825

ՀՎՀՀ՝ 00927667

14.11.2019 թ. գրանցված

կանոնադրության թիվ 001 2

փոփոխությունը գրանցված է

իրավաբանական անձանց պետական

ռեգիստրի կողմից 29.11.2024թ.

աշխատակից՝

«ՖԻԶՄԱԹ ԴՊՐՈՑԻ ԲԱՐԵԿԱՄ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(Նոր խմբագրություն)

Ք. Երևան-2024

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Ֆիզմաթ դպրոցի բարեկամ» բարեգործական հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ), հիմնադրի կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն է, որը հետապնդում է գիտակրթական և այլ հանրօգուտ նպատակներ:

1.2 Իր գործունեության ընթացքում հիմնադրամը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ օրենսդրությամբ, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով, «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքով, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքով և սույն կանոնադրությամբ:

1.3 Հիմնադրամի հիմնադիրն է Հայաստանի Հանրապետության քաղաքացի՝ Հայկազն Սարիբեկի Նավասարդյանը (անձնագիր՝ AT0412775, տրված 11.03.2020թ., 001-ի կողմից, հանրային ծառայությունների համարանիշ՝ 2001570376, հաշվառման հասցեն՝ ք.Երևան, 0060, Ավան, Դ.Վարուժան թաղ., 8 շ., բն. 31):

1.4 Հիմնադրամի հիմնադիրը իրավունք չունի միջամտել Հիմնադրամի գործունեությանը, եթե նրա ներկայացուցիչը չի հանդիսանում հոգաբարձուների խորհրդի անդամ:

1.5 Հիմնադրամի անվանումն է

հայերեն ՝ «Ֆիզմաթ դպրոցի բարեկամ» բարեգործական հիմնադրամ

ռուսերեն՝ Благотворительный фонд ,,Друзья школы физмат,,

անգլերեն՝ ,,Physmath school friends,, Charitable foundation

1.6 Հիմնադրամի գտնվելու վայրի և էլեկտրոնային փոստի հասցեներն են՝

006**0, Հայաստանի Հանրապետություն , ք.Երևան, Ավան**, **Դ.Վարուժան թաղ**., 8**շ**., **բն**.31, foundfmd@gmail.com:

2. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

2.1 Հիմնադրամի ստեղծման նպատակն է՝

- նպաստել Ա.Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցի օլիմպիական խմբակների աշխատանքներին,
- աջակցել Ա.Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցին:

2.2 Հիմնադրամի գործունեության ուղղություններն են՝

- օժտված երեխաների բացահայտում և նրանց հետ համակարգված աշխատանքի կազմակերպման աջակցում,
- տարբեր տիպի օլիմպիադաներին երեխաների մասնակցության աջակցում,
- աջակցել դպրոցի առաջընթացն ապահովող նորարարական ծրագրերի իրականացմանը,
- գիտաժողովների, դասախոսությունների կազմակերպում,
- առարկայական օլիմպիադաներին վերաբերող գրականության հրատարակում,
- օլիմպիական խմբակերի ղեկավար-ուսուցիչների վերապատրաստում,
- առարկայական խմբակների, այդ թվում միջազգային օլիմպիադաներին մասնակցող ՀՀ թիմերի նախապատրաստական աշխատանքների կազմակերպում և աջակցում,
- շենքային պայմանների, լաբորատորիաների /ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության/, ինժեներական, ռոբոտատեխնիկայի և համակարգչային կաբինետների նյութատեխնիկական բազայի բարելավում,
- աջակցել ֆիզմաթ դպրոցում կրթության որակի բարձրացմանը նպաստող պայմանների ստեղծմանը,
- Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական մարմինների ու կազմակերպությունների, տեղական, արտասահմանյան և միջազգային նույնանման նպատակ հետապնդող կազմակերպությունների և անհատ անձանց հետ համագործակցություն:

2.3 Հիմնադրամի գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության ու կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

2.4 Հիմնադրամը՝
2.4.1 մշակում է Հիմնադրամի սոցիալական զարգացման և կատարելագործման ընթացիկ և հեռանկարային ծրագրեր, ձեռնարկում է միջոցառումներ դրանց իրագործման ուղղությամբ.
2.4.2 ապահովում է կայուն նյութատեխնիկական բազա՝ կազմավորում ուսուցման արդի պահանջներին բավարարող լաբորատոր կաբինետներ, դասասենյակներ, ձեռք բերում նորագույն, այդ թվում՝ համակարգչային տեխնիկական սարքավորումներ.
2.4.3 ձեռնարկում և իրականացնում է միջոցառումներ միջազգային օլիմպիադաների ՀՀ թիմերի հանգստի կազմակերպման ուղղությամբ.
2.4.4 համագործակցում և փոխաջակցության կապեր է հաստատում Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա ուսումնական հաստատությունների, ուսումնական հաստատությունների գործունեությունը հովանավորող հիմնարկ ձեռնարկությունների, կազմակերպությունների, գործարար անձանց, ինչպես նաև օտարերկրյա միջազգային կազմակերպությունների հետ:

3. **ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ**, **ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ**, **ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

3.1. Հիմնադրամը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:
3.2. Հիմնադրամն ունի՝ ինքնուրույն հաշվեկշիռ, կարող է բացել հաշվարկային և այլ հաշիվներ բանկերում: Հիմնադրամն ունի իր անվանմամաբ կլոր կնիք հայերեն, ռուսերեն, անգլերեն գրառումներով՝ ՀՎՀՀ- ով՝ հաշվապահական և գրասենյակային փաստաթղթերի համար, կլոր կնիք, հայերեն, ռուսերեն, անգլերեն, գրառումներով՝ վկայականների, գովասանագրերի և դիպլոմների համար, դրոշմակնիք և ձևաթղթեր, անհատականացնող այլ միջոցներ:
3.3. Հիմնադրամն ունի սեփական առանձնացված գույք, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
3.4. Հիմնադիրը պատասխանատու չէ Հիմնադրամի պարտավորությունների, իսկ Հիմնադրամը՝ իր հիմնադրի պարտավորությունների համար:
3.5. Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Հիմնադրամի պարտավորությունների համար, իսկ Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:
3.6. Հիմնադրի Հիմնադրամին հանձնած գույքը Հիմնադրամի սեփականությունն և Հիմնադրամն այդ գույքն օգտագործում է սույն կանոնադրությամբ սահմանված նպատակներով:
3.7. Հիմնադրամն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:
3.8. Հիմնադրամը պարտավոր է տարեկան հաշվետվություն հրապարակել իր գործունեության (այդ թվում՝ գույքի օգտագործման) մասին:
3.9. Հիմնադրամը կարող է զբաղվել իր ստեղծման նպատակների իրականացմանը ծառայելու և այդ նպատակներին համապատասխան ձեռնարկատիրական գործունեությամբ: Հիմնադրամը ձեռնարկատիրական գործունեություն կարող է իրականացնել անձամբ կամ այդ նպատակով ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակից: Հիմնադրամն իրավունք ունի ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր, ներկայացչություններ) և հիմնարկներ:
3.10. Հիմնադրամն իր կանոնադրության նպատակներին համապատասխան իրավունք ունի անարգել տարածել տեղեկություններ իր գործունեության մասին:
3.11. Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը կարող է սույն կանոնադրությամբ սահմանված կարգով փոփոխություններ մտցնել հիմնադրամի կանոնադրության մեջ:
3.12. Հիմնադրամի գործունեության արդյունքում ստացված շահույթն օգտագործվում է իր նպատակների իրականացման համար և չի կարող փոխանցվել նրա հիմնադրին:

4.ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

4.1. Հիմնադրամի շահառուներն են՝
- Արտաշես Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցը,
-դպրոցական տարիքի երեխաները, ուսանող երիտասարդությունը (այդ թվում՝ Հիմնադրամի կանոնադրությանը համապատասխան հիմնադրամից կրթական ծառայություններ ստացողները) և նրանց ծնողները,
- հանրակրթական դպրոցների ուսուցիչները և բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսները (այդ թվում՝ հիմնադրամի աշխատակիցները),
-կրթական հաստատությունները (հանրակրթական դպրոցներ, բարձրագույն ուսումնական հաստատություններ և այլն),
- գիտակրթական կազմակերպությունները:

5. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԸ

5.1. Հիմնադրամը՝ որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտականությունների համար պատասխանատու է այդ գույքով :
5.2. Հիմնադրի կողմից հիմնադրամին հանձնված գույքը հիմնադրամի սեփականությունն է: Հիմնադրամն այդ գույքն օգտագործում է իր կանոնադրությամբ սահմանված նպատակով:
5.3. Հիմնադրամի գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել՝
ա) Հիմնադրի ներդրումը.
բ) ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվությունները և նվիրաբերությունները.
գ) դրամաշնորհները.
դ) Հիմնադրամի և իր ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները:
5.4. Հիմնադրամի սեփականությունը չի կարող օգտագործվել ի շահ իր հիմնադրի, հիմնադրամի մարմինների անդամների, հիմնադրամի աշխատողների, բացառությամբ աշխատողների աշխատավարձի և հիմնադրամի մարմինների անդամների պարտականությունների կատարմամբ պայմանավորված՝ փոխհատուցման ենթակա ծախսերի:

6. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

6.1. Հիմնադրամի կառավարման մարմիններն են Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը, Հիմնադրամի տնօրենը:
6.2. Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է (այսուհետ՝ նաև Խորհուրդ):
6.3. Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն ունի 9 (ինը) անդամ: Հիմնադրամի Խորհրդի անդամ կարող են լինել 18 տարին լրացած գործունակ ֆիզիկական անձինք, այդ թվում՝ հիմնադրի ներկայացուցիչները: Հիմնադրամի խորհրդի առաջին կազմը ձևավորվում է Հիմնադրամի հիմնադրի որոշմամբ: Հետագայում Խորհուրդը ձևավորվում կամ համալրվում է սույն կանոնադրության 6.4. կետով սահմանված կարգով: Խորհրդի անդամների լիազորությունների ժամկետը սահմանվում է երկու տարի: (Սույն կետով սահմանված ժամկետը տարածվում է սույն կանոնադրության պետական դրանցումից հետո նշանակված խորհրդի անդամների վրա:)
6.4. Հիմնադրամի Խորհրդի կազմավորման կարգը.
6.4.1. Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերում Հիմնադրամի խորհրդի անդամի լիազորությունը դադարելու դեպքում նրա փոխարեն նոր անդամ նշանակվում է հիմնադրի որոշմամբ Հիմնադրամի տնօրենի ծանուցումն ստանալու օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում:

6.4.2. Եթե սույն կանոնադրության 6.4.1. ենթակետում նշված ժամկետում նոր անդամի նշանակման մասին որոշում չի ընդունվում, ապա հոգաբարձուների խորհրդի նոր անդամը ընտրվում է Խորհրդի որոշմամբ՝ Խորհրդի նախագահի, տնօրենի կամ Խորհրդի անդամի առաջադրմամբ: Հոգաբարձուների խորհրդի անդամի լիազորությունը դադարելու դեպքում նրա փոխարեն նոր անդամ ընտրվում է հոգաբարձուների խորհրդի կողմից՝ հոգաբարձուների խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, 6.4.1. ենթակետում սահմանված կարգով նոր անդամ չնշանակվելու մասին Հիմնադրամի տնօրենի ծանուցումն ստանալու օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում: Եթե թեկնածուներից ոչ մեկը չի ստացել ընտրվելու համար ձայների անհրաժեշտ քանակ, ապա առավելագույն ձայներ ստացած երկու թեկնածուների միջև անցկացվում է կրկնակի քվեարկություն: Ընտրված է համարվում այն թեկնածուն, որը ստացել է ձայների առավելագույն քանակ, սակայն ոչ պակաս, քան հոգաբարձուների խորհրդի անդամների ձայների կեսից ավելին: Եթե սույն կետով սահմանված կարգով թեկնածուներից որևէ մեկը չի ընտրվում, ապա հոգաբարձուների խորհրդի անդամի ընտրությունները համարվում են չկայացած և հոգաբարձուների խորհուրդը երկամսյա ժամկետում կազմակերպում է նոր ընտրություններ, կամ ընդունում է որոշում հոգաբարձուների խորհրդի քանակական կազմի նվազեցման և սույն կանոնադրությունը փոփոխելու մասին:

Ժամկետի հիմքով հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունները դադարելու դեպքում Խորհրդի նոր կազմը ընտրվում է գործող խորհրդի կողմից՝ լիազորությունների դադարեցումից առնվազն 14 օր առաջ՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

6.5. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները չեն կարող լինել հիմնադրամի այլ մարմնի անդամ:

6.6. Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը վերահսկողություն է իրականացնում Հիմնադրամի գույքի նպատակային օգտագործման, ինչպես նաև Հիմնադրամի գործադիր մարմնի գործունեության նկատմամբ:

6.7. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահին ընտրում են հոգաբարձուների խորհրդի անդամները խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

6.8. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներն իրենց պարտականությունները կատարում են առանց վարձատրության՝ հասարակական հիմունքներով:

6.9. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներն իրավունք ունեն՝

ա) առաջարկություններ ներկայացնելու հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ.

բ) նախապատրաստելու և հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քննարկմանը ներկայացնելու հարցեր, առաջարկություններ և որոշումների նախագծեր.

գ) ստանալու տեղեկություններ հիմնադրամի գործունեությանը վերաբերող հարցերի վերաբերյալ:

6.10. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները պարտավոր են՝

ա) մասնակցել հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստերին.

բ) իրենց պարտականությունների կատարման ընթացքում գործել՝ ելնելով հիմնադրամի շահերից:

6.11. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամի լիազորությունները դադարում է՝

ա) Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահին տրված գրավոր դիմումի հիման վրա.

բ) նրա կողմից իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում՝ հոգաբարձուների խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն 3/4 –ով.

գ) եթե նշանակվել է ի պաշտոնե՝ նրա զբաղեցրած պաշտոնին այլ անձ նշանակելու, նրա զբաղեցրած պաշտոնի վերացման դեպքերում.

դ) եթե դադարել են հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսի կամ կեսից ավելիի լիազորությունները.

ե) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու դեպքում.

զ) նրա մահվան դեպքում:

6.12. Եթե Խորհրդի բոլոր անդամների լիազորությունների դադարման դեպքում երկամսյա ժամկետում Խորհրդի անդամների կեսից ավելին չի նշանակվում, ապա Հայաստանի

Հանրապետության արդարադատության նախարարը երկամսյա ժամկետում նշանակում է 3 անդամի կազմված ժամանակավոր խորհուրդ:

Ժամանակավոր խորհուրդը պարտավոր է քայլեր ձեռնարկել օրենքով սահմանված կարգով Խորհրդի կազմի համալրման համար:

Ժամանակավոր խորհուրդն իրավասու է՝

ա) իրականացնելու Հիմնադրամի գործունեությունը շարունակելուն ուղղված՝ օրենքով Խորհրդին վերապահված լիազորություններ.

բ) դիմելու դատարան՝ Հիմնադրամը լուծարելու համար:

Եթե ժամանակավոր խորհուրդ նշանակելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, Խորհրդի անդամների կեսից ավելին չի նշանակվում, ապա ժամանակավոր խորհուրդը պարտավոր է դիմել դատարան՝ Հիմնադրամը լուծարելու համար:

6.13. Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Հոգաբարձուների խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է հոգաբարձուների խորհրդի անդամների կեսից ավելին: Քվեարկության ժամանակ հոգաբարձուների խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Հոգաբարձուների խորհրդի որոշումներն ընդունվում են նիստերին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ:

6.14. Հոգաբարձուների խորհրդի նախագահի ընտրության և ազատման, և հիմնադրամի տնօրենի ընտրության, նշանակման և պաշտոնից ազատման, ինչպես նաև հիմնադրամի անվանման փոփոխության, լուծարման, Խորհրդի նոր անդամի նշանակման, կանոնադրության փոփոխության կամ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատման մասին որոշումներն ընդունվում են հոգաբարձուների խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Հիմնադրամի վերակազմակերպման դեպքում, Խորհուրդը Հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշումն ընդունում է Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների որակյալ (2/3) մեծամասնությամբ:

6.15. Եթե Հիմնադրամի Խորհրդի նիստում քննարկվում է Հիմնադրամի Խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա Հիմնադրամի Խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

6.16. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի իրավասությանն են պատկանում՝

ա) Հիմնադրամի ռազմավարական ծրագրերի հաստատումը,

բ) Հիմնադրամի կանոնադրութունում փոփոխություններ և լրացումներ կատարելը /որոնք չեն կարող վերաբերվել Հիմնադրամի նպատակներին և շահառուներին/, կանոնադրության փոփոխություն, նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու մասին որոշումների ընդունումը,

գ) Հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը,

դ) Հիմնադրամի կողմից իրականացվող (այդ թվում՝ անձամբ) ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,

ե) Հիմնադրամի գործունեության հիմնական ուղղությունները որոշելը,

զ) Հիմնադրամի բյուջեի և նրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և Հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունների հաստատումը,

է) Հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատումը,

ը) Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահի և տնօրենի ընտրության և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարման մասին որոշումների ընդունումը,

թ) Խորհրդի նոր կազմի ընտրությունը, Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նոր անդամների ընտրությունը և հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը,

ժ) տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման ու դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումների ընդունումը,

ի) հաստատում է հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը,

լ) հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը,
խ) տնօրենի հաշվետվությունների լսումը,
ծ) իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը,
կ) հիմնադրամի աուդիտիրականացնող անձի (աուդիտորի) ընտրությունը,
հ) հիմնադրամի լուծարման հարցով հանձնաժողովի դատարան դիմելու մասին որոշման ընդունումը,
ձ) հիմնադրամի լուծարման հանձնաժողովի (լուծարողի) նշանակումը, լուծարման կարգի ու ժամկետների սահմանումը, լուծարման միջանկյալ հաշվեկշռի հաստատումը, լուծարման հաշվեկշռի հաստատումը,
ղ) որոշում է օրենքով և սույն կանոնադրությամբ իր իրավասությանը վերապահված այլ հարցեր:
6.17. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի յուրաքանչյուր անդամ պարտավոր է ներկա գտնվել հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստին և մասնակցել քվեարկությանը:
6.18. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի արտահերթ նիստերը կարող են գումարվել հոգաբարձուների խորհրդի անդամներից յուրաքանչյուրի կամ Հիմնադրամի տնօրենի պահանջով՝ նախաձեռնողի օրակարգով:
6.19. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի արտահերթ նիստեր գումարվում են պահանջը ներկայացնելու օրվանից 15 /տասնհինգ/ օրվա ընթացքում:
6.20. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի արտահերթ նիստի օրակարգը և համապատասխան փաստաթղթերը հոգաբարձուների խորհրդի անդամներին տրամադրում է նախաձեռնողը՝ արտահերթ նիստի գումարելու պահանջ ներկայացնելու պահից հինգ օրվա ընթացքում:
6.21. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ ոչ ուշ քան 15/տասնհինգ/ օրվա ընթացքում և ստորագրվում հոգաբարձուների խորհրդի նախագահի և նիստի քարտուղարի կողմից:
6.22. Հոգաբարձուների խորհրդի նախագահը.
ա) կազմակերպում է հոգաբարձուների խորհրդի աշխատանքները.
բ) գումարում է հոգաբարձուների խորհրդի նիստերը և նախագահում է դրանք.
գ) կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը.
դ) հոգաբարձուների խորհրդի քննարկմանն է ներկայացնում հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների դադարեցման մասին որոշման նախագիծ.
ե) հոգաբարձուների խորհրդի նիստերը գումարում է ոչ պակաս, քան տարին չորս անգամ.
զ) կազմում և հոգաբարձուների խորհրդի անդամներին է տրամադրում նիստերի օրակարգը և օրակարգին առնչվող փաստաթղթերը, սահմանում է նիստի գումարման ամսաթիվը:
6.23. Հիմնադրամի տնօրենը իրականացնում է Հիմնադրամի ընթացիկ գործունեությունը:
6.24. Հիմնադրամի տնօրենի իրավասությանն են պատկանում Հիմնադրամի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը:
6.25. Հիմնադրամի տնօրենը կազմակերպում է հոգաբարձուների խորհրդի որոշումների կատարումը:
6.26. Հիմնադրամի տնօրենը՝
ա) տնօրինում է Հիմնադրամի գույքը, ներառյալ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Հիմնադրամի անունից.
բ) ներկայացնում է Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.
գ) գործում է առանց լիազորագրի.
դ) տալիս է լիազորագրեր.
ե) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.
զ) բանկերում բացում է հիմնադրամի հաշվարկային /այդ թվում՝ արտարժութային/ և այլ հաշիվներ.
է) հոգաբարձուների խորհրդի հաստատմանն է ներկայացնում հիմնադրամի կողմից հիմնադրվող տնտեսական ընկերությունների կանոնադրությունները.

ը) արձակում է հրամաններ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
թ) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում հիմնադրամի աշխատողներին, այդ թվում՝ հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ղեկավարներին և աշխատողներին.
ժ) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.
ի) տարին մեկ անգամ հաշվետվություն է ներկայացնում հոգաբարձուների խորհրդին Հիմնադրամի գործունեության մասին.
լ) սահմանված ժամկետում տարին մեկ անգամ մամուլում հրապարակում է հաշվետվություն Հիմնադրամի գործունեության մասին.
խ) լուծում է Հիմնադրամի ընթացիկ գործունեության հետ կապված, օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցեր, իրականացնում իր լիազորությանը վերապահված այլ գործողություններ:

7. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

7.1. Հիմնադրամը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում, ներկայացնում է ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններ, յուրաքանչյուր տարի օրենքով սահմանված ժամկետում հրապարակում է հաշվետվություն իր գործունեության մասին:
7.2. Հիմնադրամի տնօրենը պատասխանատվություն է կրում հաշվապահական հաշվառման, կազմակերպման վիճակի և դրա հավաստիության, տարեկան հաշվետվությանը, ֆինանսական վիճակագրական հաշվետվությունները պետական մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Հիմնադրամի պարտատերերին Հիմնադրամի մասին տրվող տեղեկությունների համար:
7.3. Հիմնադրամի աշխատակիցների և Հիմնադրամի միջև աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական և աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:
7.4. Հիմնադրամի տնօրենը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ինքն է որոշում աշխատողներին աշխատանքի ընդունելու և ազատելու հարցերը, աշխատանքի վարձատրության ձևը և չափը, աշխատանքային օրվա ռեժիմը, արձակուրդ տրամադրելու կարգը:
7.5. Հիմնադրամը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում պահպանել՝
ա) Հիմնադրամի կանոնադրությունը և հիմնադիր փաստաթղթերը, ինչպես նաև կանոնադրության մեջ կատարված փոփոխությունները և լրացումները.
բ) Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստերի արձանագրությունները.
գ) Հիմնադրամի պետական գրանցումը հավաստող փաստաթղթերը.
դ) Հիմնադրամի հաշվեկշռում գտնվող գույքի նկատմամբ Հիմնադրամի իրավունքը հավաստող փաստաթղթերը.
ե) Հիմնադրամի մասնաճյուղերի ներկայացուցչությունների և հիմնարկների կանոնադրությունները.
զ) Հիմնադրամի տարեկան հաշվետվությունները.
է) Օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթեր:

8. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

8.1. Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

8.2. Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել միայն հիմնադրամի՝ այլ հիմնադրամի հետ միաձուլման կամ այլ հիմնադրամին միացման ձևով: Հիմնադրամը վերակազմակերպելու մասին որոշում կարող է ընդունել Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը:
8.3. Հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշման ընդունումից հետո, 30 (երեսուն) օրվա ընթացքում Հիմնադրամը պարտավոր է այդ մասին ծանուցել իր բոլոր պարտատերերին:
8.4. Հիմնադրամի լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է առանց նրա իրավունքներն ու պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:
8.5. Հիմնադրամը լուծարելու մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ շահագրգիռ անձանց դիմումով:
8.6. Հիմնադրամը կարող է լուծարվել՝
ա) եթե Հիմնադրամի գույքը բավարար չէ նրա գործունեության իրականացման համար և հնարավոր չէ անհրաժեշտ գույք ձեռք բերելը.
բ) եթե հնարավոր չէ հասնել Հիմնադրամի նպատակներին և հնարավոր չէ փոփոխել այդ նպատակները.
գ) Հիմնադրամի կողմից իր կանոնադրական նպատակներից շեղվելու դեպքում.
դ) դատարանի կողմից Հիմնադրամի գրանցումն անվավեր ճանաչելու դեպքում.
ե) օրենքով նախատեսված այլ դեպքերում:
8.7. Դատարանի կողմից Հիմնադրամի լուծարման մասին որոշում ընդունելուց հետո Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը նշանակում է լուծարման հանձնաժողով և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝և ՀՀ Հիմնադրամների մասին օրենքի համաձայն՝ սահմանում է լուծարման կարգը և ժամկետները: Լուծարվող հիմնադրամի անունից դատարանում հանդես է գալիս լուծարման հանձնաժողովը:
8.8. Հիմնադրամը լուծարման գործընթացում գտնվելու մասին օրենքով սահմանված կարգով տեղեկացնում է իրավաբանական անձանց պետական գրանցող մարմնին և օրենքով սահմանված ժամկետում զետեղում հայտարարություն իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում:
8.9. Հիմնադրամի լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև այն դեպքերում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին հիմնադրամը չունի պարտավորություններ պարտատերերի նկատմամբ, գույքն ուղղվում է հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:
8.10. Հիմնադրամի լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը դադարած՝ պետական գրանցման պահից: